ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ, ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 8-12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՍՊԱՐՏԱԿԻԱԴԱ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍՊ-ԳՀԾՁԲ-18/18 -132-2018

ք. Երևան «23» 05 2018թ.

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Կ. Էլոյանի, որը գործում է որը գործում է նախարարության կանոնադրության հիման (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Դաշա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ի. Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Սպորտային միջոցառումների կազմակերպման /«ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադա»** մրցույթի անցկացման/ ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5607000 (հինգ միլիոն վեց հարյուր յոթ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[1]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

---

[1] Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումներին դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[2]:

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն Ք.Երևան Արովյան 9 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն ՀՎՀՀ 900011010940 ՀԿՀՀ 02586282	«Դաշա» ՍՊԸ ք. Երևան, Գուլակյան փող. 28 «Ինկոբանկ»ԲԲԸ ՀՎՀՀ 205062206656 ՀԿՀՀ 00138727
Աշխատակազմի ղեկավար Վ. Էլոյան	Տնօրեն Ե. Հակոբյան

[2] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

Հավելված N 1
20 թ. կնքված
ՄՊ-ԳՀՇՁԲ-18/18-139-2018 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	92621110/1		Դրամ	5607000	1		09.10.-21.11.2018թ. ներառյալ
						Միջմարզային մրցումներ՝	
						Մինի ֆուտբոլի մրցումները կանցկացվեն ՀՀ 4 քաղաքներում (Սիսիան, Դիլիջան, Երևան և Վանաձոր)	հոկտեմբերի 9-18-ը (ներառյալ)
						Բասկետբոլի մրցումները կանցկացվեն ՀՀ 4 քաղաքներում (Վայք, Դիլիջան, Երևան և Վանաձոր)	հոկտեմբերի 19-24-ը (ներառյալ)
						Վոլեյբոլի մրցումները կանցկացվեն ՀՀ 4 քաղաքներում (Սիսիան, Դիլիջան, Երևան և Վանաձոր)	հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 5-ը (ներառյալ)
						Հանրապետական փուլը ք.Երևանում	հոկտեմբերի 15-ից նոեմբերի 21-ը (ներառյալ)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ՝

ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադա մարզական միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) անցկացման համար նախատեսված անհրաժեշտ ծառայությունների ձեռքբերում՝

Հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների շրջանում առողջ ապրելակերպի արմատավորում, ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում, ֆիզկուլտուրայի և սպորտի մասսայականացումը:

Միջացառմանը մասնակցելու են Հայաստանի հանրապետության 10 մարզերի, Երևան քաղաքի և Արցախի հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտները:

Միջացառմանը ծրագիրը ներառում է՝ բասկետբոլ, վոլեյբոլ, մինի ֆուտբոլ, սեղանի թենիս, հնգամարտ, շախմատ, հրաձգություն և բազկամարտ մարզաձևերից մրցումներ:

Հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների միջոցառման ծառայությունը մատուցվում է երկու փուլերով՝ միջմարզային և հանրապետական:

Միջմարզային մրցումները անցկացվելու է՝ բասկետբոլ, վոլեյբոլ, մինի ֆուտբոլ մարզաձևերից (4 փնջերով) ՀՀ տարբեր քաղաքներում համաձայն կանոնակարգի:

Միջմարզային մրցույթը քաղաքներում կազմակերպելու և անցկացնելու համար մասնակիցը պարտավոր է միջոցառման համար նախատեսված մարզագույքը հասցնել մրցավայր, ըստ մարզաձևերի նշված քաղաքներում 2-օր ապահովի 1-**ական** մարզադահլիճներով, մարզադահլիճը իրենց հարակից տարածքներով ձևավորված լինի ՀՀ դրոշներով և մրցման խորհրդանիշ պաստառներով, տեքստը և արտաքին տեսքը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ:

Մասնակիցը պարտավոր է մարզաբազաներում ապահովել համապատասխան մարզագույքով, հաղորդավարի ծառայություն, ռադիո-տեխնիկա բարձրախոսներով խաղերի ժամանակ մրցումների ընթացքը կազմակերպելու համար, պատվո պատվանդան մրցումների ավարտից հետո մրցանակակիրների պարգևատրման արարողությունը կազմակերպելու համար, համաձայն ՄՍՖԴՔ վարչության կողմից ներկայացված ժամանակացույցի:

Բասկետբոլի մրցումները կանցկացվեն ՀՀ 4 քաղաքներում՝
ք. Վայք (հոկտեմբերի 19-21-ը ներառյալ)
ք. Դիլիջան (հոկտեմբերի 20-22-ը ներառյալ)
ք. Երևան (հոկտեմբերի 21-23-ը ներառյալ)
ք. Վանաձոր (հոկտեմբերի 22-24-ը ներառյալ)

Վոլեյբոլի մրցումները կանցկացվեն ՀՀ 4 քաղաքներում՝
ք. Սիսիան (հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 1-ը ներառյալ)
ք. Դիլիջան (նոյեմբերի 1--3-ը ներառյալ)
ք. Երևան (նոյեմբերի 2--4-ը ներառյալ)
ք. Վանաձոր (նոյեմբերի 3-5-ը ներառյալ)

Մինի ֆուտբոլ մրցումները կանցկացվեն ՀՀ 4 քաղաքներում՝
ք. Սիսիան (հոկտեմբերի 9-12-ը ներառյալ)
ք. Դիլիջան (հոկտեմբերի 11-14-ը ներառյալ)
ք. Վանաձոր (հոկտեմբերի 13-16-ը ներառյալ)
ք. Երևան (հոկտեմբերի 15-18-ը ներառյալ)

Հանրապետական փուլը անցկացվելու է Երևան քաղաքում՝ բասկետբոլ (նոյեմբերի 13-16-ը ներառյալ), վոլեյբոլ (նոյեմբերի 18-21-ը ներառյալ), մինի ֆուտբոլ (նոյեմբերի 2-5-ը ներառյալ), սեղանի թենիս (հոկտեմբերի 30-ից նոյեմբերի-3-ը ներառյալ), հնգամարտ, (հոկտեմբերի 16-18-ը ներառյալ), շախմատ (հոկտեմբերի 15-18-ը ներառյալ), հրաձգություն (նոյեմբերի 13-15-ը ներառյալ), և բազկամարտ (հոկտեմբերի 19-22-ը ներառյալ) մարզաձևերից:

Հանրապետական փուլում մասնակիցը պարտավոր է ապահովել ըստ մարզաձևերի 1-ական մարզադահլիճներ՝ **բասկետբոլ, վոլեյբոլ, մինի ֆուտբոլ, սեղանի թենիս, բազկամարտ** մարզաձևերի համար: Մարզադաշտ և ատլետիկական մարզադահլիճ (մանեժ) **հնգամարտ** մարզանի համար (400 մետր

վազքուղյակներով, ցատկափոսով, պտտաձողով, խաղադաշտը հնձված, վազքուղիները գծված, որտեղ անցկացվելու է՝ վազք 100 մետր, վազք 1000մետր, թենիսի գնդակի նետում, տեղից հեռացատկ և հենում կախված դրությունից ձգումներ մրցումները): Հրաձգարան 10 մետր երկարությամբ (**հրաձգության համար**) ապահովի 8 օդամղիչ հրացաններով, փամփուշտներով և թիրախներով: **Շախմատի տուն** (շախմատ մարզաձևի համար): Մարզադաշտը և մարզադահլիճներ (բոլոր մարզաձևերի համար) իրենց հարակից տարածքներով ձևավորված լինի ՀՀ դրոշներով և մրցման խորհրդանիշ պաստառներով, տեքստը և արտաքին տեսքը համաձայնեցնել ՄՄՖԴՔ վարչության հետ:

Մասնակիցը պարտավոր է մարզաբազաներում ապահովել համապատասխան մարզագույքով, հաղորդավարի ծառայություն, ռադիո-տեխնիկա բարձրախոսներով խաղերի ժամանակ մրցումների ընթացքը ապահովելու, պարգևատրման արարողությունը կազմակերպելու համար պատվանդան: Մրցումների ամբողջ ընթացքում Ֆոտո լուսանկարահանում և նկարների տպագրում տարբեր մարզաձևերից:

Միջմարզային և հանրապետական փուլի մրցումների
համար անցկացման համար անհրաժեշտ է հետևյալ մարզագույքը՝

Գնդակ բասկետբոլի -22 հատ
Գնդակ վոլեյբոլի -10 հատ
Ֆուտզալի գնդակ - 15 հատ
Մեղանի թենիսի գնդակ - 100 հատ
Մեղանի թենիսի ձեռնաթի - 8 լրակազմ
Մեղանի թենիսի ցանց - 2 հատ
Վարկյանաչափ - 4 հատ
Թենիսի գնդակ – 20 հատ
Ռուլետկա (100 մ.երկարությամբ) - 2 հատ
Ռուլետկա (5 մ.երկարությամբ) – 2 հատ
Հրաձգության փամփուշտ – 2000 հատ
Հրաձգության թղթե թիրախներ – 250 հատ
Շախմատ – 10 հատ
Բազկամարտի սեղանի վարձակալում -2 հատ

Գնդակ բասկետբոլի՝ կաշվե հումքից N 5-6 չափի (75-75.88սմ շրջանագիծ), քաշը 567-650 գրամ, 12 կտորից (պանել), երկու գույնանի, բացօդյա և փակ դահլիճներում օգտագործելու համար: Նախատեսված է 4 քաղաքների և եզրափակիչ մրցումների անցկացման համար:

Գնդակ վոլեյբոլի՝ կաշվե հումքից N 6 չափի (65-67սմ շրջանագիծ), քաշը 260-280 գրամ, 18 կտորից (պանել) ձեռքով կամ մեքենայով կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 2 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամերով), բազմերանգ գունավորմամբ: Նախատեսված է 4 քաղաքների և եզրափակիչ մրցումների անցկացման համար:

Ֆուտզալի գնդակ՝ կաշվե հումքից, N 5 չափի (68-70սմ շրջանագիծ), քաշը 420-440 գրամ, 32 կտորից (պանել) կարված՝ առնվազն 5 սինթետիկ թելիկներից գործված կարի թելով, 4 շերտ, պոլիեստերի կամ բամբակե ներքին շերտով, ռետինե կամ լատեքսե միջուկով (կամերով), 4 քաղաքներում և եզրափակիչ մրցումները անցկացնելու համար:

Մեղանի թենիսի գնդակ՝ պատրաստված պլաստմասսայից, չափերը՝ 40 մմ տրամագծով, նարնջագույն:

Մեղանի թենիսի ձեռնաթի (ռակետ)՝ Փայտյա բռնիչով 10սմ երկարությամբ, հարթ մակերևույթը ռետինե երեսով, հարվածային մասը չափերը 15-15.5սմ x 15.5-16սմ և 1.2 սմ հաստությամբ, յուրաքանչյուր թիմին 8 զույգ:

Մեղանի թենիսի ցանց՝ երկարությունը 183 սմ, լայնությունը 15,25 սմ, ցանցի միջով ձգված տրոս, ամրակներ սեղանի թենիսի սեղանին ամրացման համար, ցանցը լինում է տարբեր գույների, սինթետիկ թելից պատրաստված:

Վարկյանաչափ էլեկտրոնային, պլաստմասսե պատյանով:
Թենիսի գնդակ (Babolan կամ համարժեքը)՝ դեղին գույնի:
Ռուլետկա (100 մ.երկարությամբ)
Ռուլետկա (5 մ.երկարությամբ)
Հրաձգության փամփուշտ (շեշմա) օդաճնշիչ հրացանի համար (շեշմա):

Հրաձգության թղթե թիրախներ N10:

Բազկամարտի սեղան միջազգային ստանդարտներին համապատասխան:

Շախմատ՝ պատրաստված փայտյա կամ պլաստմասսե հումքից, նախատեսված երկգույն 64-վանդակներով տառանշված և թվանշված մրցումային ստանդարտներին համապատասխան: Փայտյա կամ պլաստմասսե հումքից շախմատի քարեր, 2 գույնի (16-ական հատ), մրցումային և մարզումային ստանդարտներին համապատասխան:

Մարզական խաղերում հաղթած մասնակիցներին պարգևատրելու համար անհրաժեշտ են հետևյալ մրցանակները՝

Վկայագիր (հավաստագիր) - 255 հատ
Վկայագիր (շնորհակալագիր) – 9 հատ
Վկայագիրի համար գրպանիկով թղթապանակ - 12 հատ
Մեդալներ – 231 **հատ**
Հուշանվեր -1 (գավաթներ) 11x3=33 հատ
Հուշանվեր -2 (գավաթներ) 4x3=12 հատ
Հուշանվեր-3 (գավաթներ) 1x3=3 հատ
Հուշանվեր - (օրգանական ապակուց) 36+20=56 հատ

Վկայագիր (Հավաստագիր). Հանրապետական փուլի մրցումներին 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված թիմերին և մարզիկներին պարգևատրելու համար: Չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ: Տեքստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ. Հանրապետական փուլից 10 օր առաջ, հավաստագրի ձևը կցվում է հայտին:

Վկայագիր (շնորհակալագիր) չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ, տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ.

Վկայագիրի գրպանիկով թղթապանակ, գինանշանով (Շնորհակալագիրի և հավաստագրի): Չափսը՝ 32 x 22 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ: Տեքստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ:

Մեդալներ՝ չափսը՝ 5-6 սմ տրամագծով x 3 սմ հաստությամբ, մետաղե ձուլվածք, եռագույն ժապավենով՝ 0.80 սմ երկարությամբ, սինթետիկ հումքից.

Մասնակիցը մեդալի տեսքը պարտավոր է համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ. հանրապետական փուլից 10 օր առաջ:

Հուշանվեր-1 (Գավաթ) (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված պատվիրակության համար)՝ 45 սմ, 40 սմ և 35 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով.

Հուշանվեր-2 (Գավաթ) (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված պատվիրակության համար)՝ 35 սմ, 30 սմ և 25 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով.

Հուշանվեր-3 (Գավաթներ) (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված թիմերի համար՝ հնգամարտ մարզաձևից) պարգևատրելու համար.

1-ին տեղ՝ 60 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով.
2-րդ տեղ՝ 55 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով.
3-րդ տեղ՝ 50 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով.

Յուրաքանչյուր գավաթի պատվանդանի վրա տեսքը և տեքստը պետք է համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ, հանրապետական փուլից 10 օր առաջ

Հուշանվեր օրգանական ապակուց պատրաստված, տարբեր չափերի.: Չափսը՝ **1-ին տեղը**՝ 30 սմ երկարությամբ և 25 սմ բարձրությամբ, 1 սմ հաստությամբ, **2-րդ տեղը**՝ 26 սմ երկարությամբ և 21 սմ բարձրությամբ, 1 սմ հաստությամբ, **3-րդ տեղը**՝ 24 սմ երկարությամբ և 18 սմ բարձրությամբ, 1 սմ հաստությամբ: Տեսքը և տեքստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ: Բազկամարտի և շախմատի մրցանակակիրների պարգևատրման համար:

Սպարտակիադայի մրցավարական հանձնաժողովի աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ գրենական պարագաները

Թղթե արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210 x 297 մմ) ձևաչափի թերթերի համար, **20 հատ**

Ֆայլ (թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորությամբ), 1 տուփ,

100 հատ

Թղթե կպչուն ժապավեն՝ 48 մմ x 100 մ, տնտեսական, մեծ գլանափաթաթված ժապավեն 48 մմ լայնությամբ, առանձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ,

10 հատ

Թուղթ A4 չափսի 1 (21 x 29.7), չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ² 210 x 297 մմ,

5 հատ

Ժապավեն, կպչուն պոլիեթիլային ժապավեն (սկոչ) 48 մմ x 100 մ չափսի: **10 հատ**

Հաշվիչ (կալկուլյատոր) «CITIZEN» կամ համարժեքը: **2 հատ**

Գելային գրիչ, 0,5 մմ ծայրով, տարբեր գույների, (գել) **4 հատ**

Կարիչ, (ստեպլեր) մետաղալարե կապեր (փոքր ասեղ): Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 10 մմ/6 մմ, նախատեսված է 10 համարի համար:

3 հատ

Թղթապանակ (ռեգիստրատոր) 2 օղակով,
պլաստիկ, լայնությունը՝ 80 մմ, A4 չափսի,

13 հատ

Գրիչ գնդիկավոր, տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքներով, մեծ և փոքր չափերի,

30 հատ

Մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ, սև, համապատասխան կարծրությամբ,

40 հատ

Կավիճ, աղացած պոլիէթիլային փաթեթով, սպիտակ գույնի: **2 տուփ**

Ապակարիչ, գրասենյակային ապակարիչ՝ N 10 ասեղներով կարված թղթերը քանդելու համար,

2 հատ

***Վերոհիշյալ մրցույթն անցկացվում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 20 մարտի 2018թ. N 50 Ա/1 հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադա մարզական միջոցառման անցկացման 2018 թվականի կանոնակարգի պահանջների համաձայն:**

****Պարտադիր պայման է գույքի չօգտագործված լինելը.**

***** Բոլոր աշխատանքները համաձայնեցնել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության հետ:**

****** Մասնակիցը բոլոր փուլերի համար անհրաժեշտ մարզագույքը, նվերները հասցնում է մրցավայր՝ կազմելով մարզագույքի բաշխման ցուցակներ, որոնք հետագայում ընդունման-հանձնման ակտի անբաժանելի մասն են կազմում:**

*******Կից ներկայացնում ենք հավաստագրի օրինակելի ձևը**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի
նախարարություն
Ք.Երևան Արովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011010940
ՀԿՀՀ 02586282

Աշխատակազմի ղեկավար Վ. Էլոյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Դաշա» ՍՊԸ
ք. Երևան, Գուլակյան փող. 28
«Ինեկոբանկ»ՓԲԸ
Հ/Հ 205062206656
ՀԿՀՀ 00138727

Տնօրեն Ի. Հակոբյան

(ստորագրություն)

Հավելված N 2
«23» 05 2018թ. կնքված
ՍՊ-ԳՀԾՁԲ-18/18-132-2018 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝

Անհողական Հազ.ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝*											
			հունվար	փետրվար	մարտ	Ապրիլ	Մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	92621110/1	Սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություն/« Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադա մարզական միջոցառման անցկացման »/									5607.0	5607.0	5607.0	5607.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
Ք.Երևան Արովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 2900011010940
ՀՎՀՀ 02586282

Աշխատակազմի ղեկավար Վ. Էլոյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Դաշա» ՍՊԸ
ք. Երևան, Գուլակյան փող. 28
«Ինեկոբանկ»ԲԲԸ
Հ/Հ 20506220656
ՀՎՀՀ 00138727

Տնօրեն Ի. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
«23» 05 20 թ. կնքված

ՍՊ-ԳՀՇՁԲ-18/18-132 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«23» 05 20 թ. կնքված
ՍՊ-ԳՀՇՁԲ-18/18 -132 *ծանուցագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը Պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն